

ներ պատրաստելոյ վսեմ՝ պաշտօնը ըստանձնած է եւ կգործէ, եւ Աստուծոյ կամօք ու յաջողութեամբ՝ 5 — 6 տարիէն կարող է իւր արգիւնքը ցուցանել:

Այսու ամենայնիւ պէտք է անխոնջ ջանալ նաեւ՝ որ մեր բոլոր դպրոցաց դրամական աղբիւրները հետզհետէ ընդարձակուին եւ բազմացեալ ուղղութիւն եւ արգիւնքը ընդհանրապէս ունենան, որ չափազանց դժուար չէ՝ եթէ համաձայն սիրով՝ եռանդեամբ՝ յարատեւ ջանք եւ կամք լինի:

Վ. Ե. Մ.

ՊԱՏՄԱԿԱՆ

ԱՆԴՐԱՆԻՎ ԿՈՆԴԱԿ

ԵՓՐԵՄ ԿԵԹՈՒՂԻԿՈՍԻ.

Երջանկայիշատակ Եփրեմ՝ Կաթուղիկոսի հետագայ անդրանիկ կոնդակը, զոր ի Հայրապետութիւն Հայոց օծուելէն զկնի ուղղած է Հայոց Խրիմու ի Ռուսաստան, եւ պատմական հետաքրքրական պարբերութիւնք ունենալոյն համար՝ արժան դատուեցաւ իբր յիշատակարան հրատարակել ի տեղեկութիւն մերազնէից:

«Յիսուսի Քրիստոսի ծառայ Տէր Եփրեմ եւ շնորհիւ նորին Կաթուղիկոս եւ Ծայրագոյն Պատրիարք ամենայն Հայոց Աստուածայնոյ Առաքելականի Եկեղեցոյս Քրիստոսի նաեւ բարձրագահ եւ հրաշագարգ՝ սքանչելի մեծի Աթոռոյս Սրբոյ Կաթուղիկէ Եկեղեցոյ Էջ-

միածնի Քահանայապետական անդրանիկ Կոնդակաւ մերով նուիրեմք կենսածիր ողջոյն Քրիստոսական հանդերձ Աստուածային բազմապատիկ օրհնութեամբ եւ արգիւնարար սիրով սրբոյ Հոգւոյն Աստուծոյ՝ ձեզ ամենեցուն համօրէն սիրելի զաւակացդ սրբոյ Առսաւորչին եւ Մայր Աթոռոյ նորա՝ որք էք ի սահմանս Արիմու բարեճոխ քաղաքոդ, ի Քէֆէ, ի Էսքի Ղրիմ, ի Ղարասու, ի Կեօղու, ի Ազմէշիթ, ի Բաղչասարայի, Յօրբաղար, եւ ի շրջակայս գոցին եղեալ ամենայն Հայկազնէից, նախ յաջորդափոխ Ղազար եւ վանահայր Վրդանէս արժանապատիւ վարդապետաց, սրբակրօն Քահանայից Աւագաց եւ երկրորդաց, շնորհափայլ Սարկաւագաց, եւ բնակից կղերիկոսական իմբից, ապա՝ գերափառունակ տալածաւափայլ Իշխանազնէից, բարձր գերազանց մեծաշուք աստիճանաւորաց, եւ բարձր բարեծնունդ պերճապատիւ ազնուականաց Հայոց, նաեւ աստուածասէր եւ ազգասէր գերայարգ Գլավայից *), Հոգաբարձուաց եւ արդարաքննին դատաւորաց մերազանց, հաւատարիմ եւ աշխատակիր Գանձապետաց, Աթոռակալաց եւ Երէցփոխանաց, ճշմարտաբան անխաղախ վաճառականաց, քաջահմուտ եւ հանձարեղ վայելչագործ Արհեստաւորաց, արդարաւաստակ քրտնաջան Երկրագործաց, եւ ամենայն Աստուածասէր ժողովրդոց Արամազնէից արանց եւ կանանց, հարստաց եւ աղքատաց, մեծաց եւ փոքունց, ծերոց եւ տղայոց, եւ ա-

(*) Քաղաքապետ:

մենայն չափու եւ հասակի խնդալ ի Տէր ի Քրիստոս Յիսուս յոյսն ամենայն հաւատացելոց յարադուարձ երկնային ուրախութեամբ ամէն:

« Շնորհք ողորմութիւնս բարութիւն եւ մարգասիրութիւն պաշտելի եւ երկրպագելի սրբոյ երրորդութեանն եւ մի Աստուածութեանն հանդերձ շնորհօք Մօրս ձեր լուսոյ կաթուղիկէ Էջմիածնի Քրիստոսեան ահեղահարաշ Տաճարի եւ Քրիստոսի Աստուծոյ փրկաւէտ արեամբքն մխեալ սքանչելագործ սրբոյ Գեղարդեանն եւ շնորհաբաշխ Աջոյ մեծ Քահանայապետին Քրիստոսի եւ բազմերախտ Հօրն մերոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին եւ բնաւից սրբութեանցն՝ որք աստանօր՝ բազմանցի ի վերայ հոգւոց եւ մարմնոց ձեր ամենեցուն՝ եւ ի վերայ որդւոց եւ զաւակոց եւ ամենայն բնտանեաց եւ հարազատից ձերոց՝ եւ պահպանեացէ զկեանս ձեր առողջութեամբս յաջողութեամբս խնդութեամբ եւ մխիթարութեամբ միշտ ամէն:

« Եւ յետ նախընծայ Քահանայապետական ողջունի եւ օրհնութեան՝ պարտականութիւն ինձ համարիմ նախապէս բազկատարած մաղթանօք մատուցանել զժերմեռանդակաւ աղօթս առ Աստուած վասն անգին կենաց քրիստոսատիւ կայսերն մերում Ալէքսանդր Առաքիչին եւ բարեպաշտուհի զուգակցի նորին մեծ Թագուհի եւ կայսերուհի Երիտաֆէտ Ալէքսիոփնային եւ բոլոր պալատին եւ ամենայն կայսերականայն եւ զօրաց եւ զօրապետացն նոցին՝ որոց Տէր Աստուած ըստ աւուրց երկնից յարաձգեացէ զաւուրս փափագելի կե-

նաց նոցին՝ եւ մեծ արասցէ առ նոսա զուրմութիւն իւր սուրբ՝ որով ըստ գրոյն եղիցին միշտ բերկրեալք (Սաղ. ձեկ): Նաեւ՝ առաւելապէս պարտականութիւն համարիմ մատուցանել մեծի եւ փոքու ձերսմից ապտուածասիրութեան զիւրեան անպատում շնորհակալութիւնս վասն ամենայնի սիրոյ՝ ջերմեռանդութեան եւ մեծ մարգասիրութեան ձերոյ՝ զորս օնանդր առաւելութեամբ մատուցիք մեզ՝ առ որ եմ եւ մնամ պարտաւոր հանդերձ լիաբերան օրհնութեամբ լինել միշտ աղօթաւոր վասն կենդանեաց եւ ննջեցելոց ձերոց՝ որոց ամենեցուն մեծ արասցէ Տէր ողորմութեամբ իւրով զշնորհս մարգասիրութեան իւրոյ՝ համանգամայն եւ զսիրտ պատկերի իւրոյ մեծ կայսերն կիսագլխով աշխարհի քաղցր պահպանեացէ դէպ առ սիրելի զաւակունսդ սրբոյ Լուսաւորչին եւ Մայր Աթոռոյ նորա յայտրմ հետէ մինչեւ յաւիտեան ամէն:

Ապա ծանուցանեմ բարեպաշտ սիրելեացդ մերոց զուրախականս եւ զզուարճացուցիչս՝ որոց յաղագս գիտեմ եւ ես՝ զի ըստ բարի սրտից ձերոց յաւէտ ախորժէք լսել՝ եւ հոգիք ձեր առաւելապէս զգենուն զմեծ մխիթարութիւն ի փառս յուսոյն մերոյ Աստուծոյ ամենակարողի: Եւ զոր պատմեմս՝ այս է՝ զի շնորհօք բարերարին մերոյ քրիստոսատիւ մեծ կայսերն ամենայն Ռուսաց եւ օգնականութեամբ մեծ կուսակալի եւ առաջին կառավարչի կողմանց Վրաց փանուր եւ այլոց պատուաւոր կառավարչաց առաւել քան որչափ ձերդ կարէր լինիլ յօժարութիւն սրտից՝ գերա-

դոյն փառաւորութեամբ եւ մեծ ապահովութեամբ ճանապարհորդեալ մինչեւ ի ծայրս սահմանաց ինքնակալ մեծ կայսերութեանն ամենայն Ռուսաց, ի հինգերորդում աւուր ամսեանն Հոկտեմբերի մտաք ի սահմանս տէրութեան Պարսից ի գաւառն Ասպարան անուն մերձ ի մուտս արեւուն, եւ ահա յերկրորդում աւուր՝ ընդ լուսանալ առաւօտուն եկին հասին բազմութիւնք յառաջաւորաց երեւելի եպիսկոպոսաց, Վարդապետաց եւ ժողովրդոց Հայոց, ընդ որս եւ ոմանք յերեւելեաց Պարսից բազմութեամբ զինուորաց, եւ այնպիսի հանգիստաւոր ճանապարհորդութեամբ իջեալ ի գաշտն Արարատեան՝ ժամանեցաք յԱստուածաէջ Աթոռն ամենայն Հայոց ի սուրբ Կաթողիկէ Էջմիածին յիններորդ աւուրն յիջեալ ամսոյն, որ էր տարելից երկրորդ ամի եւ յիշատակ հանգստեան ամենապատիւ երանելի Դանիէլ նահատակ Կաթողիկոսի՝ յորքաներորդում աւուր նոյն ամսոյ էր նա աւանդեալ զսրբասնեալ հոգին իւր յառաջ քան զերկուս ամս, եւ արժանացեալ երկրպագութեան Աստուածաէջ օրբութեան տեղւոյն հանդերձ բազմութեամբ ընդ մեզ եկեալ Արք եպիսկոպոսաց, եպիսկոպոսաց եւ այլոց ի խղճալի միաբանից օրբոյ Աթոռոյս՝ որք մինչեւ զայժմ եւս կէին ի վտարանդի, գետնամածեալ ծնրադրութեամբ վերամատուցաք զաղօթս առ Աստուած վասն համօրէն կենդանեաց եւ ննջեցելոց աղբի Հայոց, եւ վասն ձեր եւ ձերայնոցն իսկ յատկապէս՝ իբրեւ յառկեղ սիրելեաց եւ իմոց մեծասէր հա-

րազատից։ Յետ երկուց աւուրց ճանապարհորդեալ յԱրտաշատ մերձ ի Խորվիրապն օրբոյ Լուսաւորչին մերոյ, ուր էր բանակեալ ահաւոր դօրաց բազմութեամբ գոլութեանց արժանաւոր մեծագոր Սպարաս միրզայ, Շահգառայն, ըստ ճշմարիտ յուսագրութեան, նորա ի ձեռն բազմիցս գրեալ հրովարտական իւրոց, գտաք առաջի նորա եւ առաջի մեծ եպարքոսի նորին եւ ամենայն նախարարացն եւ բոլոր բանակին զմեծ շնորհս, մինչեւ զարմանալ ամենայն տեսողաց եւ լսողաց։ Քանզի՝ զառաջինն ինքն մեծագոր Շահգառայն՝ որ մինչեւ ի Թիֆլիզ էր յղեալ գերկուս ի ծառայից իւրոց հրաւիրակս մեղ, իսկոյն ընդ մտանելն ի սուրբ Աթոռն՝ մեծ եղարքոսն նորա հանդերձ գրութեամբ իւրով յղեալ զոմն ի հաւատարմաց իւրոց, շնորհաւորէր զգալուստ մեր, եւ այն ինչ ի 13 նորին ամսոյ ի ճանապարհորդել մեր ի բանակն ընդմիջէաք ըզճանապարհն, ահա ելին ընդ առաջ առաքեալք ի մեծ եպարքոսէն զաեճապետն եւ իշխանն կառավարութեան տան նորա բազմութեամբ զինուորաց հեծելոց, եւ իբրեւ սակաւ մի յառաջ ընթացաք, եւ անդէն ահա ելին ընդառաջ առաքեալք ի մարդասէր Շահգառայէն երկրորդն ի յանդիմանական պաշտօնէից տէրութեան նորա՝ նոյնպէս բազմութեամբ զօրաց հեծելոց, եւ այնպէս մեծաւ փառօք մոծեալ զմեզ ի բանակ անդր՝ տարեալ իջուցին ի վրան եպարքոսին, զոր յատուկ վասն մեր տուեալ էր հարկանել դուռն առ դուռն իւրում վրանին՝ ոչ հեռի աւե-

ի քան 910 քայլ, ուր խելոյն ընդ բազմիլն՝ մատուցին ահա ի վրանաց եպարքոսին զգանազան անուշեղէն ըմպելիս եւ ուտելիս մեղ, եւ ընդ մեղ եղեալ Արք եպիսկոպոսացն, եւ յետսակառւոյ զհամագամ կերակուրս, թէպէտեւ ծով՝ էր ինքեանց այն օր: Աոյնսիս սիս գործեցին զմարդասիրութիւնս յորչափ աւուրս մնացաք ի բանակի անդ: Յերկրորդումն աւուր՝ որ օր 14 էր ամսոյն՝ ներկայացուցեալ զմեզ բարեգովեալ նահապետայն, հրաւիրեալ նստոյց յանդիման իւր յոյժ մերձաւորագոյն, եւ թէ զմիտի մարդասիրութիւն եւ յուսադրութիւն արար, արդարեւ Աստուծոյ սքանչելեացն էր տնօրէնութիւն, եւ արժանաւոր մեծի զարմացման: Յերկրորդումն աւուր մատուցաք մեք զընծայս՝ զորս արժան համարեցաք, զկառէթն^{*} մեր եւ զոմանս իրս՝ գործս ճարտարաց Եւրոպայեցոց՝ ոչ բազում ինչ, եւ թէ որպիսի՝ հաճութեամբ ընկալաւ. ակնորժելի է եղանակն առատասիրտ եւ առանց ագահութեան պատկերակերպող: Ի չորրորդումն աւուր՝ որ օր 16 էր ամսեանն՝ ինքն մեծագոր նահապետայն յղեաց վասն մեր նախ զչորս պատուական խիւայս՝ զերկուս զիպակեղէնս ագանելիս ըստ ծիսի Պարսից, զգօտի ոսկեթել ծանրագին, եւ զշալ՝ զոր սովորութիւն է կաթուղիկոսաց իբրեւ նշան յարգութեան պարգեւեալ ի նախնի թագաւորաց Պարսից, արկանել զպարանոցաւ՝ երկօքին ծայրքն կախեալք զառաջեաւ մինչեւ ցթաթս ոտիցն: Յղեաց եւ վասն եօթն պատուաւոր Արք եպիսկոպոսացն՝ որք ընդ մեզ՝ զմի մի ոսկեթել ագանելիս եւ զշալս, եւ վասն տէր Մելքիսեղէկ խաչակիր աւագ Քահանայի Ղամաղեանց՝ զերկուս ոսկեթել ագանելիս Ապա յղեաց վասն մեր զմի երիւար՝ եւ զկնի այնորիկ զհրովարտակն վասն կաթուղիկոսութեան մերոյ, յորում յետ աղգի աղգի յուսադրութեանց՝ եւ լի բահատաւորութեան նախնի թագաւորացն Պարսից պարգեւագրով շնորհաց, յաւելու նոր ինքն եւ զայս, թէ՛ հրամայեմք զերկուս Էպէկ^{*} ընթացուցանել առաջի իհեծանեւն իձի մին՝ ըստ նախնի սովորութեան, եւ միւսն՝ մերս ողորմութեան նշան. այլեւ յատկապէս ողորմութիւն արարեալ, տարեկան ռոճիկ հաստատեցաք չորս հարիւր թուման, զոր ամ ըստ ամէ հասուցեն առ ինքն հրովարտակաւ հանդերձ՝ կառավարիչք տէրութեան մերոյ, եւլն: Եւ այսպէս ի 17 Հոկտեմբերի դարձ արարեալ փառաւորութեամբ ի սուրբ Կաթուղիկէ Էջմիածին, ի 6 Նոյեմբերի՝ յաւուր կիւրակէի՝ որ էր երկրորդ օր երկնային Քահանայապետութեանցն տօնի, մեծահանգէս նաւակատօր ընկալաք ի գլուխս մեր զսրբազնակատար շնորհ Հոգւոյն սրբոյ Աստուծոյ զօծումն օրբալոյս իւղոյն Մեռոնի. եւ

յետ ցթաթս ոտիցն: Յղեաց եւ վասն եօթն պատուաւոր Արք եպիսկոպոսացն՝ որք ընդ մեզ՝ զմի մի ոսկեթել ագանելիս եւ զշալս, եւ վասն տէր Մելքիսեղէկ խաչակիր աւագ Քահանայի Ղամաղեանց՝ զերկուս ոսկեթել ագանելիս Ապա յղեաց վասն մեր զմի երիւար՝ եւ զկնի այնորիկ զհրովարտակն վասն կաթուղիկոսութեան մերոյ, յորում յետ աղգի աղգի յուսադրութեանց՝ եւ լի բահատաւորութեան նախնի թագաւորացն Պարսից պարգեւագրով շնորհաց, յաւելու նոր ինքն եւ զայս, թէ՛ հրամայեմք զերկուս Էպէկ^{*} ընթացուցանել առաջի իհեծանեւն իձի մին՝ ըստ նախնի սովորութեան, եւ միւսն՝ մերս ողորմութեան նշան. այլեւ յատկապէս ողորմութիւն արարեալ, տարեկան ռոճիկ հաստատեցաք չորս հարիւր թուման, զոր ամ ըստ ամէ հասուցեն առ ինքն հրովարտակաւ հանդերձ՝ կառավարիչք տէրութեան մերոյ, եւլն: Եւ այսպէս ի 17 Հոկտեմբերի դարձ արարեալ փառաւորութեամբ ի սուրբ Կաթուղիկէ Էջմիածին, ի 6 Նոյեմբերի՝ յաւուր կիւրակէի՝ որ էր երկրորդ օր երկնային Քահանայապետութեանցն տօնի, մեծահանգէս նաւակատօր ընկալաք ի գլուխս մեր զսրբազնակատար շնորհ Հոգւոյն սրբոյ Աստուծոյ զօծումն օրբալոյս իւղոյն Մեռոնի. եւ

յետ ցթաթս ոտիցն: Յղեաց եւ վասն եօթն պատուաւոր Արք եպիսկոպոսացն՝ որք ընդ մեզ՝ զմի մի ոսկեթել ագանելիս եւ զշալս, եւ վասն տէր Մելքիսեղէկ խաչակիր աւագ Քահանայի Ղամաղեանց՝ զերկուս ոսկեթել ագանելիս Ապա յղեաց վասն մեր զմի երիւար՝ եւ զկնի այնորիկ զհրովարտակն վասն կաթուղիկոսութեան մերոյ, յորում յետ աղգի աղգի յուսադրութեանց՝ եւ լի բահատաւորութեան նախնի թագաւորացն Պարսից պարգեւագրով շնորհաց, յաւելու նոր ինքն եւ զայս, թէ՛ հրամայեմք զերկուս Էպէկ^{*} ընթացուցանել առաջի իհեծանեւն իձի մին՝ ըստ նախնի սովորութեան, եւ միւսն՝ մերս ողորմութեան նշան. այլեւ յատկապէս ողորմութիւն արարեալ, տարեկան ռոճիկ հաստատեցաք չորս հարիւր թուման, զոր ամ ըստ ամէ հասուցեն առ ինքն հրովարտակաւ հանդերձ՝ կառավարիչք տէրութեան մերոյ, եւլն: Եւ այսպէս ի 17 Հոկտեմբերի դարձ արարեալ փառաւորութեամբ ի սուրբ Կաթուղիկէ Էջմիածին, ի 6 Նոյեմբերի՝ յաւուր կիւրակէի՝ որ էր երկրորդ օր երկնային Քահանայապետութեանցն տօնի, մեծահանգէս նաւակատօր ընկալաք ի գլուխս մեր զսրբազնակատար շնորհ Հոգւոյն սրբոյ Աստուծոյ զօծումն օրբալոյս իւղոյն Մեռոնի. եւ

(*) Կառք:

մատուցեալ զփրկականն սուրբ Պատարագ: յիշատակեցաք առաջի անմահ Որդւոյն Աստուծոյ զկենդանիս եւ զնրն-ջեցեալս հարազատ սիրելեացդ մերոց, զորս եւ ինքն Աստուած յիշեսցէ ամենաբարցր մարդասիրութեամբ իւրով, եւ ողորմեսցի ձեզ եւ ամենայն կենդանեաց եւ ննջեցելոց ձերոց: ամէն: Արդ՝ մեք այսպէս ի շնորհաց ամենակարող Տեառն մերոյ զբարւոյ մարդասիրութիւն գտեալ յամենայն իշխանաց հայրենեաց մերոց ի մեծաց եւ ի փոքունց, վայելեմք այժմ զբարւոյ ազահոյութիւն եւ զմեծ մխիթարութիւն ի գիրկս լուսածին ծնողիս մերոյ: եւ շրնորհակալ եմք զսուրբ Ժողովոյն բարձրագոյն խորհրդարանի եւ զհամակամութենէ հասարակութեան միաբանից, որք յայսպիսում Ժամանակի բարւոյ կառավարութեամբ պաշտպանեալ զերկնանման սուրբ Գահս Աստուծաէջ, յանձնեցին ի մեզ գեղեցիկ պայծառազարդութեամբ, որպիսի չէր ականունելի երբէք, որոց ամենեցուն ինքն Քրիստոս հատուցէ զվարձս բարեաց բազմապատիկ շահեկանութեամբ ըստ իւրաքանչիւրոց վաստակոց եւ աշխատութեանց: Սակայն ճշմարտութեամբ ասեմ ի Քրիստոս եւ ոչ ստեմ, զի առաւելագէս կարօտի յատուկ ջերմեռանդութեան եւ սիրոյ լուսածին որդւոցդ իւրոց, որպէս զի պայծառացի անդրէն միւսանգամ Էջմիածին Հարսն լուսոյ: Վասն որոյ՝ յանուն Յիսուսի Քրիստոսի, որ տէրն է սրբոյ Տաճարի Մայր Աթոռոյս ձերոյ, յորդորեմ զսիրեցեալ զաւակունսդ սորին եւ զհարազատսդ իմ, զի

թէպէտ եւ մեք չունիմք զձեզ մոռանալ երբէք, այլ եւ դուք մի նուազեցուցիք զսէր եւ զջերմեռանդութիւն ձեր առ մեզ եւ առ լուսածին ծնողս ձեր, այլ ըստ որում որդիք անարատ ծնողութեան սորին, եւ ըստ որում իմ յատկացեալ մոեքիմք եւ անձնագիրք, զսէր եւ զջերմեռանդութիւն ձեր աննուազելի ունիցիք, եւ մանաւանդ թէ յայսմ հետէ առաւել եւս զօրացուցիք, եւ իւրաքանչիւր դք ամենեքին ջերմեռանդութեամբ հոգւոյ, պարզ սիրով եւ հարազատ խորհրդով իբրեւ որդիք հարազատք ձեռնառու լինիցիք յիրողութիւնս հարկաւորեալս, որով թերեւս արագահաս օգնականութեամբն իւրով տացէ Տէր Աստուած տեսանել եւ վայելել զպայծառութիւն Տաճարի Կաթողիկէ Էջմիածին Մայր Աթոռոյ ամենայն Հայոց:

« Ողջ լերուք եւ շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ եւ ընդ հոգւոյդ ձերումիշտ, ամէն:

« Գրեցաւ յամի Տեառն 1810, եւ Հայոց 1259, ի Երրորդ աւուր ամսեանն Դեկտեմբերի առ գրան գերագահ Աթոռոյ Կաթողիկէ Էջմիածնի: Թ. 7:

Կաթողիկոս ամենայն Հայոց

Ե Փ Ր Ե Մ .